Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն թիվ 7 (18/19)

Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի 28.03.2019թ.կայացած նիստի

Խորհրդի նիստին մասնակցում էին նրա 36 անդամներից 28-ը :

Օրակարգ՝

1. Կիրառական էլեկտրադինամիկա և մոդելավորում ամբիոնի նոր մագիստրոսական ծրագրի քննարկում:

Զեկ.՝ Ա. Բաբաջանյան

2. Տեղեկատվություն 2018-2019 ուս.տարվա 1-ին կիսամյակի ուսումնական գործընթացի վերաբերյալ ուսանողների շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցման տվյալների մասին:

Զեկ.՝ամբիոնների վարիչներ

3. Էլեկտրոնիկա մասնագիտության 2019-2023 ուսումնական պլանում փոփոխություններ կատարելու հարցը:

Զեկ.՝ Ս. Մելքոնյան

4. Ընթացիկ հարցեր:

Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ.

Լսեցին **-** ԿԷՄ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա.Ժ. Բաբաջանյանի զեկույցը Կիրառական էլեկտրադինամիկա և մոդելավորում ամբիոնի նոր մագիստրոսական ծրագրի մասին:

Արտահայտվեց **-** ֆակուլտետի դեկան, ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր Խ.Վ. Ներկարարյանը:

Որոշեցին.- հաղորդումն ընդունվեց ի գիտություն:

Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ.

Լսեցին – Ամբիոնների վարիչների տեղեկատվությունը 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի վերաբերյալ ուսանողների շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցման տվյալների մասին: Նրանք ըստ

համապատասխան ամբիոնների ներկայացրեցին դասախոսների ստացած գնահատականները և ամբիոնային միջին գնահատականը:

Արտահայտվեցին **-** Ֆակուլտետի դեկան, պրոֆ. Խ.Վ. Ներկարարյանը ներկայացրեց ֆակուլտետային միջին գնահատականը՝ 4,74, ինչպես նաև դեկանատի գնահատականը՝ 4,55, որոնք համալսարանական մասշտաբով բավականին լավ արդյունքներ են:

Որոշեցին.- հաղորդումն ընդունվեց ի գիտություն:

Օրակարգի 3-րդ հարցի կապակցությամբ.

Լսեցին – Էլեկտրոնիկա մասնագիտության 2019-2023 ուսումնական պլանում փոփոխություններ կատարելու հարցը: :

Արտահայտվեցին **-** Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի պրոֆեսոր Ս.Վ. Մելքոնյանը նշեց, որ հաշվի առնելով տվյալ ոլորտի դինամիկ զարգացումը և հիմք ընդունելով նաև արտասահմանյան առաջատար բուհերի ծրագրերը, անհրաժեշտություն է առաջացել ծրագրում կատարել որոշ փոփոխություններ: Առաջարկվող փոփոխություններին դրականապես արտահայտվեցին նաև ֆակուլտետի դեկան, պրոֆ. Խ.Վ. Ներկարարյանը և պրոֆ. Ֆ.Վ. Գասպարյանը: Նշվեց, որ առաջարկվող փոփոխությունները հանգամանալից քննարկվել են նաև ֆակուլտետի մեթոդական խորհրդում:

Որոշեցին.- Հավանություն տալ Էլեկտրոնիկա մասնագիտության 2019-2023 ուսումնական պլանում առաջարկվող փոփոխություններին:

Խորհրդի նախագահ,
ֆ.մ.գ.դ. պրոֆեսոր ***Խ.Վ.Ներկարարյան***

Գիտքարտուղար,
Ֆ.մ.գ.թ. ***Մ.Ս. Ալեքսանյան***